ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Վահե Հակոբյան[1]
Հայկ Քոչարյան[2]
Տաթևիկ Մկրտչյան[3]

ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.)[4]

Բանալի բառեր՝ *Արցախյան պատերազմ, 44-օրյա պատերազմ, արաբալեզու մեդիա, սոցցանցեր, վարձկաններ*

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իր պատմության ողջ ընթացքում տարբեր վայրիվերումներով միշտ եղել է զանգվածային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, ինչպես նաև ինֆորմացիոն պատերազմի և հիբրիդային պայքարի առանցքում:

Հատկապես վերջին տասնամյակում ինչպես ամբողջ աշխարհում այնպես էլ արաբալեզու սոցցանցերի զարգացման և դրանց կարևորության բարձրացմանը զուգահեռ հանրային հաղորդակցման այս գործիքներն ընդգրկվել են Լեռնային Ղարաբաղում պատերազմի շուրջ տեղեկատվական պայքարում՝ հասարակական կարծիք ձևավորելու և դրա վրա ազդելու նպատակով:

Ակնհայտ է, որ 2020թ. Արցախյան պատերազմը կարևոր տեղեկատվական ազդակ էր ինչպես միջազգային տեղեկատվական հարթակների համար, այնպես էլ արաբալեզու

[1] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դասախոս: Էլ.փոստ՝ vahe.hakobyan@ysu.am
[2] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի վարիչ: Էլ.փոստ՝ hkocharyan@ysu.am
[3] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դասախոս: Էլ.փոստ՝ tmkrtchyan@ysu.am
[4] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5H223 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

միջավայրում: Հետազոտության նախորդ փուլում ուսումնասիրության է ենթարկվել 2016թ. ապրիլյան ռազմական գործողությունների և մասնավորապես 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում արաբալեզու զանգվածային լրատվամիջոցներում շրջանառվող դիսկուրսները, դրանց ուղղվածությունը, նման դիսկուրսների շրջանառման պատճառները և հետևանքները[5]:

2020թ. Արցախյան պատերազմի ընթացքում ակտիվորեն, իսկ պատերազմից հետո ավելի նվազ հաճախականությամբ, սակայն շարունակվում են արաբական թվային մեդիայում և սոցցանցերում այս հակամարտության հետ կապված թեմաների արծարծումն ու քննարկումը: Կարևոր է հասկանալ, որ այն ինտենսիվությունը, որը մենք տեսնում էինք հենց պատերազմի օրերին, սկսում է ժամանակի ընթացքում նվազել և միայն ակտիվանում է որևէ նոր և անսպասելի իրադարձության կամ արտաքին այս կամ այն կարևոր դերակատար երկրի հետ տարբեր առնչությունների համատեքստում:

Հետազոտության ընթացքում մշտադիտարկման է ենթարկվել և ուսումնասիրվել արաբալեզու սոցիալական մեդիայի ամենատարածում և ընդգրկում ունեցող սոցցանցի՝ Թվիթերի՝ Արցախյան թեմաներով գրառումներ հրապարակող օգտահաշիվների՝ անհատների, քաղաքական գործիչների, մուսուլմանական այս կամ այն համայնքը ներկայացնող գործիչների գործունեության բովանդակությունը, որոնք ունեն առնվազն մի քանի հազար հետևորդ և դիտում: Թեմատիկ և բովանդակային վերլուծություն միջոցով վեր են հանվել առկա դիսկուրսները:

[5] Տես Մկրտչյան Տ., Հովհաննիսյան Մ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանումը արաբալեզու տեղեկատվական կայքերում պատերազմական փուլերում (2016, 2020 թթ.). դիսկուրսների վերհանում, Արևելագիտության հարցեր, հ. 21, Երևան, 2022, էջ 31-49:

Ուսումնասիրությունն իրականացվել է մեդիա մոնիթորինգի միջոցով դիսկուրս անալիզի և/կամ թեմատիկ վերլուծության մեթոդաբանության կիրառմամբ[6]:

Վերոնշյալ չափանիշների հիման վրա մշտադիտարկման արդյունքում հավաքագրել ենք թվիթերյան գրառումները, դասակարգել, դիտարկել դրանց ժամանակագրությունը և բովանդակային բեռնվացքները: Այս հոդվածում կներկայացնենք թվիթերյան հրապարակումների վերլուծության արդյունքում դուրս բերված արաբալեզու հիմնական դիսկուրսները, որոնք առնչվում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, պատերազմին, և ընդհանուր առմամբ նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստին՝ փորձելով ներկայացնել դրանք ժամանակագրորեն:

Հենց պատերազմի առաջին օրերին մի քանի ստորև բերված թվիթերյան գրառումները ներկայացնում են, թե ինչպես է ընկալվում այս հակամարտությունը և, որոնք են դրա առաջացման պատճառները:

«Երբ 1980-ականներին Խորհրդային Միությունը սկսեց թուլանալ, արցախցիները փողոցներում բողոքի ցույց էին անում Ադրբեջանից անկախանալու և Հայաստանի հետ միանալու համար: Սա չբավարարեց Ադրբեջանին և հանգեցրեց երկու երկրների միջև պատերազմի բռնկմանը, և ադրբեջանական ագրեսիան առ այսօր սպառնում է Արցախի ժողովրդին»[7]:

«Լեռնային Ղարաբաղի պատերազմը Բոսնիա և Հերցեգովինայի պատերազմի վերարտադրությունն է: Կրոնի և

[6] Հետազոտության հաջորդ փուլերում նախատեսվում է նյութերի հավաքագրման և վերլուծության համար օգտագործել Nvivo ծրագիրը, որն ավելի լայն հնարավորություններ է ընձեռում մեծաթիվ և տարբեր տեսակի նյութերի վերլուծություններ իրականացնել թե՛ բովանդակության քանակական և որակական գործիքակազմերի կիրառմամբ:

[7] عبدالله المنصوري, [@almansoori], (2020, Sep 27), Tweet, Twitter, https://twitter.com/almansoori/status/1310168311032950784

ազգայնականության գործոնները մայր ֆեդերացիաների փլուզումից հետո, Հարավսլավիայի Դաշնության անկումից հետո բռնկվեց բոսնիական պատերազմը, իսկ Ռուսաստանի Դաշնության անկումից հետո՝ Ղարաբաղյան պատերազմը։ Ժողովուրդների էթնիկ, կրոնական, լեզվական անկախությունից փախուստ չկա, իսկ պատերազմի ելքը վճռված է»[8]:

Վերոնշյալ թվիթերյան գրառումները ցույց են տալիս, որ հակամարտության առաջացման պատճառների շուրջ կա հետևյալ ընկալումը. այս հակամարտությունն առաջացել է ազգային ինքնագիտակցության վերելքի պայմաններում հանուն էթնիկ, կրոնական և լեզվական հիմքերով ինքնորոշման և անկախության, որն էլ տեղի էր ունենում ԽՍՀՄ-ի փլուզման շրջանում։

Իսկ հաջորդ թվիթը վկայում է այն մասին, որ Թուրքիայի ցեղասպան և էթնիկ զտումների քաղաքականության արժանի հետնորդ/ժառագորդ են անվանում Արդրբեջանին այս անգամ Արցախյան էթնիկ հայերի նկատմամբ վարվող հակամարտության համատեքստում։

«Ադրբեջանը ոչ միայն դեմ է արտահայտվել Արցախի տարածքում մեծամասնություն ունեցող հայ բնակչության ինքնորոշման իրավունքին, այլև հակամարտությունը վերածել է էթնիկ զտումների պատերազմի՝ նպատակ ունենալով փոխել տարածաշրջանի ժողովրդագրությունը, ինչպես իր դաժան պաշտպան Թուրքիան է կատարում պատմության ողջ ընթացքում»։[9]

Թվիթերյան գրառումների հաջորդ խումբն առանձնացրել ենք ըստ օգտատերերի վերաբերմունքի Արցախյան հակամարտության երկու կողմերից որևէ մեկին։

---

[8] سامح عسكر, [sameh_asker@], (2020, Oct 1), Tweet, Twitter, https://twitter.com/sameh_asker/status/1311434100742467585

[9] Jourin Keelo, [@JourinKeelo], (2020, Sep 27), Tweet, Twitter, https://twitter.com/JourinKeelo/status/1310283923646226433

«Իսրայելն ու Թուրքիան սատարում են Ադրբեջանին, իսկ ԱՄԷ-ն ու՞մ հետ է: Իսրայելի մեղսակցությունը ադրբեջանական պատերազմին պայմանավորված է արցախահայության դեմ օգտագործված զենքի վաճառքով, որը հակասում է ԵԱՀԿ սահմանած արգելքին, հարց է ծագում. ո՞րն է Իսրայելի շահը հրադադարի ամենամեծ խախտման մեջ հանդես գալ Թուրքիայի կողմից»[10]:

«Արաբ ազգայնական եղբայրներին. կա՛մ ԼՂ պատերազմը ձեզ չի վերաբերում, որովհետև դրա երկու կողմերն արաբներ չեն, կա՛մ մի զլացեք աջակցել մուսուլման թուրքերին՝ հայերին սատարելու հետ զուգընթաց»[11]:

Վերոնշյալ գրառումները վեր են հանում մի քանի հետաքրքրքական դիսկուրսներ: Նախ քննարկվում է այս պատերազմում Ադրբեջանին Թուրքիայի անմիջական աջակցության հարցը, Իսրայելի կողմից Ադրբեջանին զենքի լայնածավալ վաճառքները և այս հարցում կարծես թուրք-իսրայելական գործողությունների փոխշահավետությունը: Այս համատեքստում է, որ հարց է ուղղվում ԱՄԷ-ին, թե նա այս հակամարտության կողմերից ու՞մ է պաշտպանելու: Հաջորդ գրառումը նույնպես քննարկում է կողմերից որևէ մեկին կամ երկուսին սատարելու հարցը այն տեսանկյունից, որ եթե հակամարտության երկու կողմերում էլ արաբներ չեն, ապա մի տեսակ անհասկացվածության և որոշակի բողոքի ձայն է բարձրացվում մուսումլան արաբների կողմից քրիստոնյա հայերին սատարելու և մուսուլման ադրբեջանցիներին չաջակցելու համատեքստում:

[10] ياسر أبو هلالة, [@abuhilalah], (2020, Oct. 5), Tweet, Twitter, , https://twitter.com/abuhilalah/status/1313083915062718465

[11] محمد المختار الخليل. [Mohdelmoctar@], (2020, OCT 7), Tweet, Twitter, https://twitter.com/Mohdelmoctar/status/1313586457509011463

Այս թեմայի շարունակություն կարելի է դիտարկել նաև Թուրքիայի և Իսրայելի անմիջական աջակցությունը Ադրբեջանին 44 օրյա պատերազմում հաջողության հասնելու համար: Միևնույն ժամանակ դրանք նաև Իրանի դեմ գործողությունների տեսանկյունից են ներկայացվում:

«Ե՛վ Իսրայելը, և՛ Թուրքիան աջակցել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի կառավարությանը 2020 թվականին Հայաստանի դեմ Լեռնային Ղարաբաղի պատերազմում, որն ավարտվել է հայկական ուժերի հանձնմամբ»[12]:

Արաբական սոցիալական մեդիայում հաջորդ կարևոր թեմաներից է հակամարտության մեջ և մասնավորապես պատերազմական գործողություններում թուրք-ադրբեջանական համատեղ քայլերի և քաղաքականությունների մշակման և վարման դիսկուրսը:

«Արդյո՞ք Թուրքիային հաջողվել է հաղթահարել #Չինաստանի ազդեցությունն #Ադրբեջանում՝ դառնալով ածող եվրասիական տերություն: Ադրբեջանին ռազմական օգնություն տրամադրելու Թուրքիայի որոշումը Բաքվին հնարավորություն տվեց հասնելու Լեռնային Ղարաբաղի պատերազմում մեծ հաղթանակի. Հարավային Կովկասում փոխվել են աշխարհաքաղաքական կանոնները»[13]:

«Թեև Թուրքիան հրապարակավ խուսափում է Իրանի հետ վեճում Ադրբեջանին աջակցելուց, հաշվի առնելով թուրք-իրանական հարաբերությունների զգայունությունը, Անկարան մենակ չի թողնի Բաքվին: Բայց միևնույն ժամանակ նա ցանկանում է ղարաբաղյան պատերազմում ունեցած իր

[12] Hoda_jannat, [@hodajannat], (2020, Dec 25), Tweet, Twitter, https://twitter.com/hodajannat/status/1342548783226384385
[13] عبدالعزيز الدغيم, [AzizRashed0@], (2021, Feb 2), Tweet, Twitter

ձեռքբերումները վերածել երկարաժամկետ և կայուն ռազմավարական ազդեցության»[14]:

Այս թվիթերյան գրառումը կրկին անգամ վկայում է Թուրքիայի և Ադրբեջանի միասնական գործելու քաղաքականության մասին և մասնավորապես 2020թ. Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմում, ինչպես նաև ցույց է տալիս Թուրքիայի հավակնությունները և սպասելիքները այդ պատերազմի հաղթանակից հետո: Փորձում են այդ հաղթանակի ձեռքբերումները ամրագրել որպես իրենց ռազմավարական ազդեցության մեծացման համար: Սա կրկին վկայում է, որ ինչպես այլ շրջանակներ, այնպես էլ արաբական միջավայրում կա այն մոտեցումը, որ Թուրքիան անմիջականորեն մասնակցել է այդ գործողություններին և մեծապես ազդել պատերազմի նման ելքի վրա, ինչը բնական է դարձնում ձեռքբերումները սեփական շահերին սպասարկեցնելու նրանց նկրտումները: Վերոշարադրյալ գրառման հաջորդ կոմպոնենտը թուրք-իրանական հարաբերությունների դաշտում է, որտեղ ակնհայտ է դառնում, որ Իրան-Ադրբեջան հարաբերությունների սրման պարագայում Թուրքիան հաստատ միայնակ չի թողնի Ադրբեջանին, ինչպես նաև Ադրբեջանը այդ հարցում կարող է ակնկալել այլ դաշնակիցների և Իրանի ոխերիմ թշնամիների աջակցությունը:

Հաջորդ թվիթն էլ անդրադառնում է Թուրքիայի կողմից Ադրբեջանի գործողությունների վրա ունեցած ազդեցություններին կամ այս, կամ այն հարցում թուրքական կողմից ճնշումների վկայության մասին, սակայն ակնհայտ է, որ նման փոխադարձ ճնշման առիթները և հնարավորությունները կարող են երկուստեք լինել:

[14] محمود علوش - Mahmoud Allouch, [@allouch88], 2021, Oct 10, Tweet, Twitter, https://twitter.com/mahmoudallouch/status/1447215610472144897

«Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը բացել է դարաբաղյան վերջին պատերազմում զոհված հայ զինվորների սաղավարտների ցուցահանդեսը: Նրա վրա բազմաթիվ թուրքեր են ճնշում գործադրել դրա համար: Միասին հիշենք #Հայաստանում հայի ոտքերի տակ ընկած Թալեաթ փաշայի կտրված գլխի արձանը...»:[15]

Հաջորդ կարևոր թեման, որը լայնորեն շրջանառվում է արաբալեզու թվիթեր սոցիալական հարթակում Ադրբեջանի և Հայաստանի կողմից օգտագործված զենքերի տեսակների, դրանց արտադրության երկրների, որակների և արդյունավետության քննարկումն է: Ստորև փորձել ենք ներկայացնել դրանցից մի քանիսը, որոնք առնչվում են այդ թեմաներին:

«Պուտինի գաղտնի հակաբայրաքտար լազերային զենքը խափանվել է. Դա առաջացրել է Պուտինի խիստ զայրույթը, հատկապես դարաբաղա-ադրբեջանական պատերազմում նրա զենքի սարսափելի ձախողումից հետո»[16]:

Սա շատ կարևոր է հատկապես, եթե հիշենք, թե ինչպիսի քննարկումներ էին ընթանում դեռ պատերազմի ընթացքում և պատերազմի ավարտից անմիջապես հետո հատկապես թուրքական զենքի առավելության և այս պատերազմում դրանց ինտենսիվ կիրառության, և այդ զենքը որպես Ադրբեջանի հաղթանակի հիմնական գրավական ներկայացնելու շուրջ: Ստորև բերվող թվիթը շատ պատկերավոր է նկարագրում Ադրբեջանական պաշտոնական հեռուստաընկերության ցուցադրված տեսաձայնային հաղորդումը՝

«Հիշենք, այն տեսարանները, երբ Ադրբեջանի մայրաքաղաքում Թուրքիայի նախագահ Էրդողանի մասնակցությամբ անցկացված զորահանդեսին ցուցադրվում էին

[15] Ela kravan, [@ela_kravan], (2021, Apr 13), Tweet, Twitter, https://twitter.com/ela_kravan/status/1381954381600411651

[16] صالح الحمد أبوعامر [@saleeh_al_hamad], (2021, Jan 2), Tweet, Twitter https://twitter.com/saleeh_al_hamad/status/1345112366783090688

Անկարայից Բաքվի կողմից գնված թուրքական անօդաչու թռչող սարքերը, որոնք մեծ դեր են ունեցել Ղարաբաղյան պատերազմի և Ադրբեջանի կողմից իր հողերի վերականգնման գործում: Նրա ներկայությունն ուղեկցվում էր օսմանյան մահտրանի երաժշտությամբ»:[17]

Ընդհանրապես սոցցանցերում զենքի շուրջ քննարկումները տեղի են ունենում պարբերաբար, և օրինակ ներքոշարադրյալ գրառումը վկայում է այն մասին, որ բայրաքթարների այդպիսի որակի և արդյունավետության երաշխավոր էին բազմաթիվ այլ երկրներ, որոնք տեխնոլոգիապես հնարավոր են դարձրել Բայրաքթարների արտադրությունը Թուրքիայում.

«Բոլորը գիտեն, որ թուրքական #Bayraktar անօդաչու թռչող սարքերի ուժը կայանում է կանադական #L3Harris ընկերության կողմից տրամադրվող հայտնաբերման և ուղղորդման համակարգի մեջ, առանց որի այն ավելի լավը չի լինի, քան խաղային դրոնները, սակայն #Կանադան դադարեցրել է #Թուրքիա մատակարարել այս տեխնոլոգիան՝ Ղարաբաղյան պատերազմին հաջորդած հայկական լոբբիի ճնշումներից հետո»:[18]

Կան նաև այնպիսի գրառումներ, որոնք ոչ միայն առավելությունների մասին են խոսում այդ զենքերի, այլ օրինակ մի գրառման մեջ, որտեղ խոսվում է պակիստանյան կործանիչների կողմից իսրայելական անօդաչուներին խփելու մասին, գրառումն ավարտվում է հետևյալ կերպ.

«Ի գիտություն՝ ղարաբաղյան պատերազմը վերածվել է թուրք-իսրայելական մեդիա տեղեկատվության՝ զենքի կեղծ ու

[17] المعتز بالله حسن , @Almoutaz_bellah, (2020, Dec 10), Tweet, Twitter, https://twitter.com/Almoutaz_bellah/status/1337064336137867264

[18] For Western Sahara, @WesternSaharaQ, (2021, May 8), Tweet, Twitter, https://twitter.com/WesternSaharaQ/status/1390761153899372545

չափազանցված գովազդի համար, իսկ ձախողման ու կորուստների չափերի մասին չեն խոսել»[19]

Իրանի Իսլամական Հանրապետության դիրքավորման և հակամարտության երկու կողմերից որևէ մեկին սատարելու հարցը շատ հետաքրքրական կերպով է արծարծվում արաբալեզու թվիթերյան գրառումներում: Նախ քննարկվում է, որ Իրանը սկզբից եղել է Հայաստանին սատարելու դիրքերում, սակայն, հետագայում հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթե Ադրբեջանը մասնավորապես Թուրքիայի աջակցության միջոցով հաղթանակ տոնի, ապա Իրանը պետք է շատ ավելի ջանքեր թափի Հարավային Կովկասում իր դիրքերը պահելու, միևնույն ժամանակ Ադրբեջանի կողմից իբրև Արևմտյան Ադրբեջանի շուրջ լարվածությունների հնարավոր առաջացման և դա որպես խաղաքարտ օգտագործելու դեմը Իրանը պետք է առնվազն դիմագրավել կարողանա, եթե չասենք, որ այդ իրադարձություններին կարող է ավելի լայնածավալ գործողություններ հետևել:

«Թեհրանը օրեր առաջ, Ղարաբաղյան պատերազմի սկզբում, կանգնած էր հայերի կողքին, բայց Իրանը զգաց այս սխալը և սկսեց փոխել կողմնացույցը՝ վախենալով կորցնել իր ազդեցությունը Հարավային Կովկասում և Իրանի ներսում ադրբեջանցիների նկատմամբ՝ Ադրբեջանի տարած հաղթանակի հետևանքներից»:[20]

“Այաթոլլահ Խամենեիի դիրքորոշումները Լեռնային Ղարաբաղի պատերազմի վերաբերյալ.

[19] أحمد عايض , [@ahmedayed2000@], (2021, Jul 11), Tweet, Twitter, https://twitter.com/ahmedayed2000/status/1414169048506589188

[20] نورس للدراسات/ NORS, [@NorsForStudies], (2020, Oct 8), Tweet, Twitter, https://twitter.com/NorsForStudies/status/1314205987528601602

- Լեռնային Ղարաբաղը ոչ մի երկրի, այդ թվում՝ Ռուսաստանի կողմից ճանաչված չէ որպես հայկական»:[21]

Կարևոր քննարկումներ են ծավալվում նաև այս հակամարտության հիմքում կրոնական գործոնի դերակատարության, ինչպես նաև կրոնական պատերազմ լինելու շուրջ: Ադրբեջանական կողմը ջանքեր չի խնայում, որպեսզի կարողանա օգտագործել այս հակամարտության կրոնական ասպեկտը՝ դրանով իսկ ապահովելով առնվազն մուսուլմանական երկրների համերաշխությունը Ադրբեջանի հետ: Որոշակի դեպքերում բնական է, որ այն տալիս է իր պտուղները, սակայն կարևոր է հասկանալ, որ համամուսուլմանական կոնսոլիդացիայի համար նախ Ադրբեջանը պետք է լինի մուսուլմանական շարիաթով ապրող երկիր, մյուս կարևոր հանգամանքը պետք է առնվազն լինի աշխարհի մուսուլմանների մեծամասնության դավանանքի՝ սուննիական իսլամի քարոզիչ և զարգացնող, միևնույն ժամանակ նրան առավել բարդ լույսի ներքո է ներկայացնում իր շիայական բնակչության առկայությունը և նրանց նկատմամբ իր ճնշումների քաղաքականությունը, ինչը թերևս կարող է կոնսոլիդացնող լինել համասուննիական համատեքստում և շատ ապակայունացնող հանգամանք շիայական շրջանակների համար:

Ընդհանրապես իսլամական աշխարհի՝ աշխարհիկ կամ կրոնական պետության օրինակ լինելու ձգտումը երկու պետություններին՝ Թուրքիային և Իրանին դարձնում է հակընդդեմ քաղաքական մոդելների պայքարի առաջամարտիկներ ու

[21] عباس محمد الزين, [AbbasAlzein@], (2020, Nov 3), Tweet, Twitter, https://twitter.com/AbbasAlzein/status/1323598897311289344

որոշակիորեն ստվերում տնտեսության ոլորտում ունեցած սերտ համագործակցությունը[22]:

Իրանական արտաքին և անվտանգային քաղաքականության ռազմավարական վտանգներից է նաև սիրիացի զինյալների հայտնվելը անմիջականորեն իրենց սահմաններին մոտ: Հարավային Կովկասում զինյալների հայտնվելը և՛ Իրանի, և՛ ինչ-որ առումով նաև Ռուսաստանի համար թերևս անվտանգության կարևոր մի հանգրվանից՝ այն է իրենց սահմաններից նրանց հեռու պահելուց զրկվելն է: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ Ղարաբաղում ահաբեկչական խմբավորումների առկայությունը միշտ կարող է հակամարտությունն ընդլայնելու պատճառ դառնալ:

Ստորև բերված թվիթում քննարկվում է Իրանի և այլ քրիստոնյա պետությունների աջակցությունը քրիստոնյա Հայաստանին, այլ ոչ թե շիայական Ադրբեջանին, որն էլ այս պարագայում սուննիական իսլամ դավանող Թուրքիայի աջակցությունն է վայելում:

«Քրիստոնյա Հայաստանը Ռուսաստանի, Իրանի, Ֆրանսիայի և Հունաստանի աջակցությամբ ռազմական հանցագործություններ է իրականացնում Թորքիայի կողմից աջակցություն ստացող՝ շիա Ադրբեջանին հարող օկուպացված Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում խաղաղ բնակիչների նկատմամբ»:[23]

Թվիթերյան գրառումների մեջ առանձնացրել ենք ևս երկու թեմա, մեկը վերաբերում է արաբական երկրներից Հայաստան ժամանած ազգությամբ հայերի մասնակցությանը այս

[22] Hill, F. (2003). Seismic shifts in Eurasia: The changing relationship between Turkey and Russia and its implications for the South Caucasus. Southeast European and Black Sea Studies, 3(3), 55–75. doi:10.1080/14683850412331321648, p. 60

[23] عبدالله الشايجي [@docshayji], (2020, Oct 17), Tweet, Twitter, https://twitter.com/docshayji/status/1317236568776712195

պատերազմի ընթացքում և դրանց տարբերությունը Սիրիայից դեպի Ադրբեջան ժամանած վարձկաններից, իսկ երկրորդն էլ վերաբերում է Հայաստանի Հանրապետության ներքին որոշումներին՝ վարձկաններին դատապարտելու և նաև Թուրքիայից ապրանք չներմուծելու ՀՀ կառավարության որոշմանը: Սրանք վկայող թվիթերյան գրառումները ստորև՝

«Հալեպը սգում է իր երեք զավակներին, ովքեր իրենց կյանքը տվել են հանուն հայրենիքի՝ Հայաստանի համար, արցախյան պատերազմի ժամանակ: Նրանք չեն գնացել որպես վարձկաններ, ինչպես սիրիական ընդդիմադիր խմբակցությունները, այլ ավելի շուտ ետ մղելու նեոօսմանիզմի էքսպանսիան: Նահատակները Հայ հեղափոխական դաշինքի անդամներ են (Դաշնակ)»:[24]

Այս թվիթերյան գրառման թեման մի քանի տեսանկյունից է կարևոր, նախ տվյալ հասարակություններում հայկական համայնքի՝ որպես տվյալ երկրի հասարակության լիակատար անդամների ընկալման հարցը, ինչպես նաև ընկալումը, որ նրանք վարձկաններ չեն: Այլ հակառակը դրա հիմքում նաև դրվում է նրանց այդ պայքարին մասնակցելու գաղափարական հենքը՝ այն է՝ նեոօսմանիզմի էքսպանսիային դիմագրավելը:

«#Երևանի դատարանը ահաբեկչության մեղադրանքներով ցմահ ազատազրկման է դատապարտել Ադրբեջանում Արցախյան պատերազմում Թուրքիայի համար կռված վարձկաններ Միհրաբ Մուհամմադ ալ-Շախիրիին և Յուսեֆ ալ-Աբեդ ալ-Հաջիին: Նրանք ձերբակալվել են Ջեյշ ալ-Հուռի այլ զինյալների հետ միասին: Սիրիայի տականքներն աշխարհի բանտերում են..!»:[25]

Վերոնշյալ թվիթերյան գրառումը մի կողմից հստակ ցույց է տալիս, որ Սիրիայից Թուրքիայի միջոցով զինյալ-վարձկաններ են

[24] Sargon Hadaya, [@SargonHadaya], (2020. Nov 15), Tweet Twitter, https://twitter.com/SargonHadaya/status/1327968634250072064

[25] فارس الشهابي, [@ShehabiFares], (2021, May 5), Tweet Twitter, https://twitter.com/khalediskef/status/1389730167564771330

տեղափոխվել Լեռնային Ղարաբաղում կռվելու համար, մյուս կողմից բացասական վերաբերմունք է արտահայտվում նրանց նկատմամբ։

«Հայաստանն արգելում է թուրքական ապրանքների ներմուծումը 2021 թվականի սկզբից մինչև 6 ամսով՝ ի պատասխան Ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանին Թուրքիայի կողմից ցուցաբերվող աջակցության։ Թուրքական արտահանման ծավալը Հայաստան անցյալ տարի կազմել է 268,1 մլն դոլար»։[26]

Թվիթերյան շրջանակները փաստորեն արձագանքում են նաև Հայաստանի կողմից Թուրքիայից տնտեսական սահմանափակումների թեմաներին պատերազմական գործողություններին զուգահեռ։

Ամփոփելով արաբալեզու թվիթերյան թեմատիկ ուղղությունները՝ կարելի է առանցվացնել հետևյալ թեմանները.

- հակամարտության ծագումը և պատճառները,
- ադրբեջանական ցեղասպան քաղաքականությունը արցախահայության և հայերի նկատմամբ,
- հակամարտության կողմերին՝ Հայաստանին և Ադրբեջանին սատարող երկրները, դրանց մոտիվացիաները, ակնկալիքները, քաղաքական հաշվարկները, մասնավորապես Իսրայելի և Թուրքիայի աջակցության դերը պատերազմի ելքի համար,
- իսրայելական և մասնավորապես թուրքական զենքի ազդեցության և «անփոխարինելիության» ներկայացումները,
- Իրանի և աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային փոփոխություններում իր դերի և տեղի համար պայքարի համատեքստը,

[26] زاور شوج, [ZawarShawaj@], (2020, Oct 16), Tweet, Twitter, https://twitter.com/ZawarShawaj/status/1317036772954677253

- թուրք-ադրբեջանական համագործակցությունը, դրանում միմյանց շահերի պարբերաբար առաջմղման քաղաքականությունը,
- Թուրքիայի կողմից վարձկանների ներգրավման հարցը այս պատերազմում,
- որոշակի ներհայաստանյան իրադարձությունների ներկայացում հակամարտությանն առնչվող այս կամ այն թեմաներով:

DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021).

Vahe Hakobyan, Hayk Kocharyan, Tatevik Mkrtchyan

(Summary)

Throughout its history, the Nagorno-Karabakh conflict with its ups and downs has always been at the center of mass media's attention, as well as the most important axis of information and hybrid wars.

Especially in the last decade, parallel to the development of Arabic-language social networks and their increasing importance, these tools of public communication have been included in the information war surrounding the Nagorno-Karabakh issue to shape and influence public opinion.

During this study, the 2020 Nagorno Karabagh war and its afterwards period related content of the activities of individuals, politicians, and figures representing the different Muslim communities, who have several thousand Twitter followers and views were analyzed. The existing discourses were revealed through thematic and content analysis.